



տր, իսկ ինքը միայն փոխանորդ: Բանն այդանց է հասած եղել:

Վերջապէս պ. Աբգար Գովհաննիսեան պ. Սպանդար Սպանդարեանի հովանու ներքոյ պատգամաւոր, ահա մի նորութիւն, որի վրա այդ մեծագուտիւնների բարեկամներէն ոմանք կը զարմանան անշուշտ, ոմանք կը հիւսնան, ոմանք էլ զուցէ կը զայնովանային ու կը արտմեն մեծաքաղաք կ. Պոլսում:

Պ. Սպանդարեան օրեր առաջ սակ էր թէ ինքը ում ուղեւոր ընարել կը սայ: Մարտի 8-ին նա ճանարտեց իր այդ մեծախօսութիւնը: Եւ ընարել տուց պ. Աբգար Գովհաննիսեանին: Փոյթի չէ թէ ինքը ոչ մի քաղաքում, ոչ մի դերուում չէր ընտրուել: Բաւական է որ նա իր ոյթի ասպարէզը տուաւ պ. Աբգար Գովհաննիսեանին, ընտրել տարով նրան մարտի 8-ին պատգամաւոր իսկ ինքը համեստութեամբ մնաց փոխանորդ: Այժմ մնում է պ. Գովհաննիսեանին նոյնպէս ասպետաբար հատուցում անել պ. Սպանդարեանին, իր տեղը տարով նրան: Այդ ասպետութիւնը պարտաւոր է անել պ. Գովհաննիսեան, մասնաւոր այն տեսութեամբ, որ արդեա՛ն Սպանդարեան նոյնքան անդրադարձումը կը կարողանայ ընտրութիւն անել տալ և վարդաբի քաղաքում:

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄՅ

Փետրվարի 27-ին

Յունարի վերջերս մօտ 10 օր Արդուինում մնալով տեղական հայ հասարակութեան արամադրութիւնն ինձ լաւ յայտնի է: Չը կարծեմ, թէ կողմասի մի ուրիշ քաղաքում Սեդրակեան սրբազան այնքան ջերմ համակրութիւն ունենայ, որքան Արդուինում և չըջակաբար: Երբ Արդուինում սրբազան իբրև վրաստանի և իմբրեթի թեմի առաջնորդ ճանապարհորդում էր իր թեմում և եկել էր Արդուին, այնտեղ այնպիսի ընտրի յիշատակներ էր թողել, որ ժողովուրդը դեռ ևս կըրում է նոյն տպաւորութիւնը և հաշիւ թէ երբ և իցէ կարողանայ մոտանալ նոյնը: Ամբողջ 15 օր Արդուինում մնալով սրբազան Սեդրակեան իրան յատուկ հաստատմանութեամբ, յարատուութեամբ և եռանդով մարքեց, բարեկարգեց մինչև այն ժամանակ երեսի վրա մնացած եկեղեցական և դպրոցական գործերը: Եկեղեցու բարեկարգութեան հետ միասին, նա հող էր ասնում և կըրթական գործի առաջդիմութեան, այսպիսով լրացնելով Արդուինում սրբազանի սկսած գործը, որը իբրև կարծի և բաժնու մի թեմի առաջնորդ երկու անգամ այցելած է Արդուինը: Տարիներից յետոյ անվերջանալի դարձած եկեղեցական խառն հաշիւները, քանանաների և ժողովրդի մէջ գոյութիւն ունեցած կնճառ գծութիւնները չորհիւ Սեդրակեանի կարգադրութեան և զարդն էլ թէ ներթափանի և թէ ուսումնական կողմից՝ համեմատելով նախորդ վիճակին, առաջացան: Սեդրակեանի ղեկավարման և նա միայն այն քանանաները, որոնք ժողովրդի մէջ, իրանց անձնական օգտի համար, շարունակում էին որոնն ցանկը, անհող մնալով թէ դէպի եկեղեցին և թէ դէպի դպրոցը և բացի իրանց անձնական շահից և հանգստութիւնից ուրիշ ոչ մի պարտաւորութիւն չը դրաւ իրանց վրա:

Իսկ աշխարհականներից էլ դառնապէս դժգոհ մնացին նրանք, որոնք եկեղեցական հաշիւներ ունէին իրանց ձեռքում, և թէ եկեղեցու, թէ դպրոցի վերաբերեալ գումարները կամ իբրև պարտք և կամ այլ ճանապարհով իրանց մօտ ունենալով, դժուարեաններ էին վերադարձնել ըստ պատկանելոյն և միայն Սեդրակեանի խիստ, բայց նպատակաւոր կարգադրութեան չորհով հանցանք վերջապէս մարքել այդ հաշիւները: Մի ուրիշ ոչ պակաս հարազատ յատկութիւն, որ նկատեց Արդուինի չըջակայ հայ ժողովուրդը Արդուինում եպիսկոպոսի մէջ, այդ նրա վերին աստիճանի անշահարկութիւնն էր, որ շատ անգամ ստիճանեցան տեսնելու: Այս բոլորից պարզ է արդէն, որ Արդուինի գաւառի հայ ժողովուրդը, իրիմասնից յետոյ ում է ուղում տեսնել թափուր մնացած կաթողիկոսական դասի վրա: Վերջապէս անկողող չեմ համարում միանգամայն այս էլ անկարողութիւնը, ինչպէս յայտնի է, Արդուինում և չըջակաբար կաթողիկ հայեր անկի մեծ թւով են ընակվում, քան լուսաւորականներ: Եւ հայկաթողիկներն էլ դրաւած էին Սեդրակեանի անձնաւորութեամբ ու գաւառում այնպիսի տեղեր, ուր միայն հայկաթողիկներ են ընակվում, ինչպէս, օ-

րինակ, Արդուինում, որանք կատարեցին այն պատշաճաւոր յարգանքն ու մեծարանքը, որ սրբազանն իրաւունք ունէր սպասելու իր ժողովրդից:

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄՅ

Մարտի 1-ին

Ամենաճիշդ ստղբերից խնայց պ. Աւետիս Ղուկասեանի կողմի մասին հետեւեալը: Պ. Ղուկասեան լինելով անգուակ, իր կնոջ համար թողնում է «Աւետիս» շոգենակի ընկերութեան կէս մասը, որն արժէ 120,000 ռ., կանխիկ դրամով 15,000 ռ., կարգարեան ճեմարանում երկու թոշակաւորներ պահելու համար 15,000 ռ., Շուշու հողերը զարդն 5,000 ռ., նոյն քաղաքի օրիորդաց դպրոցին՝ 5,000 ռ., Բագուում մի նոր եկեղեցի կառուցանելու՝ 30,000 ռ., Ղուկասի գաւառում Գիւլիսար թիքախօս վիլլի հայոց ուսումնարանին՝ 1,000 ռ., Բագուում Մարտիրոսեան ընկերութեան օրդին 20,000 ռ., իր երկու քոյրերին ամեն մէկին՝ 4,000 ռ., բայց ամենանշանաւոր դուստր, այն է՝ 150,000 ռ. պ. Ղուկասեան կարգադրել է այսպէս. այդ դուստրը, որ մտցած է «Արափերեան» և ընկերութեան կողմէ նախկին մեծ ընկերութեան մէջ, պէտք է մնայ անձեռնմխելի, մինչև նրա դուստրը կը հասնի 400,000 ռուբլի քանակութեան, այնուհետև այդ դուստրի անմիջական կարգադրութեան իրանքը թողած է կտակադատարանին միայն իրն պայմանով, որ այդ դուստրով բացվի մի մեծ դպրոց:

Յարակցում ենք մեր գոհունակութեան և այն, որ ցանկալի էր արագայ Ղուկասեան զարդը տեսնել մի նշանաւոր հայկական կենտրոնում, իսկ թէ որտեղ կը լինի այդ, այդ ցոյց կը տայ այդպէս: Հանդիպելով նմանօրինակ կտակների, մենք չենք կարող չը յայտնել մեր դարմանքը, որ մինչև այսօր դեռ ոչ մի կտակող, բացի ուսումնարանից և եկեղեցուց, աչքի առաջ չեն ունենում միւս հասարակական հիմնարկութիւնները: Բողոքովն աչքաթող է անվում օրինակ թատրոնը, որը ամենից շատ կարօտ է մի խոշոր նախադասութեան, անտես են առնուում հրատարակչական ընկերութիւնը, լրագիրները, գրադարանները: Յանկալի էր նոյնպէս աչքի առաջ ունենային և մի որ և է արհեստագործական դպրոց հայկական կենտրոններից մէկում:

ՆԱՄԱԿ ԵՈՒՆՈՒՅ

Մարտի 8-ին

Այսօր կողմասի հայոց Բարեկործական ընկերութեան Շուշու տեղական Տիւրք ընդհանուր ժողով կայացաւ, ընկերութեան գրադարան-ընկերացարանում: Ժողովի պարապման առարկաներն էին. 1) ընտրել, ժամանակը լրացած վարչութեան չորս անդամի տեղ, վարչութեան չորս անդամ և երկու փոխ-անդամ, և 2) ընտրել վերատուգող յանձնաժողովի անդամներ, անցեալ տարվայ հաշիւը ստուգելու համար: Նախագահում էր պ. Մարգարեան: Նախ հարց բարձրացաւ, թէ արդեօք ժողովը կարող է կայանալ, թէ ոչ: Ոմանք ասում էին, թէ որովհետև ընկերութեան համար այսօր պէտք է նոր վարչութիւն կազմել և որովհետև ընկերութիւնը այս տարի, համեմատելով անցեալ տարվայ հետ, քիչ անդամ ունի, ուստի պէտք է այսօր ժողովը յետաձգել, յետոյ թող վարչութիւնը ընկնէ մեր «Թօփիսանա» անունով օրհնած հրատարակչական սրահ-նրան ինդրէ, աղաչէ, որ ընկերութեան անդամ դրվին, և այնուհետև ժողովը կազմվի... Ժողովը, ի հարկէ, մերժեց այդ տարրինակ առաջարկութիւնը, քանի որ ժողովում ներկայ էր անդամների 2/3 մասը, ուրեմն, ըստ կանոնադրութեան, ժողովը կարող էր կայանալ: Վարչութեան անդամներ ընտրվեցան. պ. պ. Ա. Բարեկանեան, Ն. Արդուին, Ն. Մէլքե-Թանդեան և Ն. Սանդրաբեկեան: Վարչութեան մէջ մնում է նին անդամ պ. Մ. Լազարեան, որի ժամանակը դեռ չէ լրացել: Փոխ-անդամներ ընտրվեցան. պ. պ. Ստ. Տէր-Մկրտչեան և Մ. Դանաղարեան: Այնուհետև ընտրվեցան վերատուգող յանձնաժողովի անդամներ, որով և փակվեց ժողովը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բարեկանաբար, 8 մարտի թիֆլիսի լրագիրներում լուրեր տպվեցան, որոնք վերաբերում են զօրքերի միջոցները տեղափոխող կապալաւորներին և որոնց մէջ կարծիք էր յայտնվել, որ իրար է տեղական իշխանութիւնը համաձայնում կապալը մի անձին տալու: Արդարութիւնը երևան հանելու համար ինդրում ենք տպագրել հետեւեալ պատասխանը: Հիմարեան այս է: Գաւառապետ պ. Կանչելի, տեսնելով որ Ղազարի գաւառի ամեն մի գիւղ ունենալով իր կապալաւոր, իշխանութիւնը զբաղաւորում է իր ժամանակին հարկաւոր սայրերը պահանջել նրանցից, ոմանց բացակայութեան և ոմանց փախուստ տալու պատճառով, որից և ճանապարհի վրա գտնված գիւղացիք սակի են վնասվում (ըստ որում զօրքերի միջոցները սրուչակ ժամանակին պիտի դնան գիւղերում տեղից) — մեր գիւղն էլ հենց ճանապարհի վրա լինելով, մինչև 1890 թիւը շատ նեղութիւնների պատահեց, կապալաւորների շատութեան պատճառով, քանի որ մէկն ասում էր իմ պարտքը չէ, միւսը խոյս էր տալիս և այլն. մենք էլ դիմեցինք պ. գաւառապետին, որը կանչեց գաւառի բոլոր գիւղերի ներկայացուցիչներին Ղազար քաղաքը, որոնք միաձայն որոշեցին 1891 թիւ կապալը տալ պ. Ալեքսանդր Զարեկեանին, առաջը 40 կօպէկով: Այն ինչ մինչև այդ օրը տուր 1—4 ռուբլի էր տալիս: Այսպիսով զործն անել հեշտացաւ. իշխանութիւնը ճանաչեց մի մարդ, որի հետ և անելի հեշտ էր ժողովրդի համար գործ ունենալ, քան թէ տաս մարդու հետ: Պէտք է այս էլ ասել, որ անցեալ 1891 թիւն շատ լաւ էր և ով գնացել է պ. կապալաւորի մօտ, ստացել է իր սայլի վարձը լիովին: Մենք օրհնով մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում մեր գաւառապետին, որը առատեց մեզ շատ կապալաւորների վատ սովորութիւնից:

Ստորագրութիւններ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաթում, մարտի 3-ին Տեղիս հայոց ծխական դպրոցի նախկին ուսուցիչ դպրի Յովսէփ Տէր-Պետրոսեան, որը 1889 և 1890 թիւականներին վարում էր Բարեկործական ընկերութեան տեղական ընդհանուր ժողովի քարտուղարի պաշտօնը, քաղաքից հեռանալու ժամանակ իր հետ վերցրել տարել է (գետուր է գուշակել թէ ինչ պատճառով և ինչ հիման վրա) ընդհանուր ժողովի վերաբերեալ դանդաղ պաշտօնական թղթեր և բացի մի նիւտի արձանագրութիւնից, ոչ մի նիւտ չէ ուղարկել մինչև հիմա, ինչպէս վկայում է ժողովի նոյն ժամանակի ատեստապետ տէր-Կոստանդին քանանայ Տէր-Ստեփանեան:

Իմանալով այս և ընդհանուր ժողովի այժմեան դիմադրի առաջարկութեամբ, վարչութիւնա 21 մայիսի 1891 № 21 գրութեամբ դիմեց դպրի Տէր-Պետրոսեանին, Ալեքսանդրօպօլում, ինքրիկով նրան վերադարձնել վերաբերեալ թղթերը: Բայց նա ստանալով հանդիման վարչութեան նոյն գրութիւնը, այստե ամենայն միջնակ հիմն դեռ ևս չէ զործարկած նրա այդ իրաւացի պահանջումը, ոչ մի բացատրութեամբ էլ չարդարացնելով իր այս վարմունքը:— Եւ որովհետև նրա այժմեան ընտրութեան տեղի մասին որոշ տեղեկութիւն չը կայ, ուստի և վարչութիւնա լրագրութեան միջոցով վերադիմ դիմում է դպրի Յովսէփ Տէր-Պետրոսեանին կրկնելով նրան իր առաջարկութիւնը՝ վերադարձնել իր մօտ գտնված վերաբերեալ թղթերը, որոնք, ինչպէս յայտնի է, թէ է ժամանակաւորապէս, այսինքն նրա քարտուղարութեան միջոցին, նրա մօտ էին գտնվում, բայց իբր ընկերութեան տեղական Տիւրքն են պատկանում և հետեւաբար անձնական չեն կարող լինել:

Բարեհաճեցե՞ք, պ. խմբագիր, զետեղել «Մշակ»-ի մտաւայ համարներից միում ներկայ գրութիւնն՝ ընդունելով կանխապէս վարչութեան շնորհակալութիւնը:

Նախագահ՝ Ա. Սարուսեանեան, գործավար՝ Ա. Աւրեւեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի մեզ հետագրում են. «Արիւսակէս Սեդրակեան սրբազանը ստանձնեց շեմարանի տեսչի պաշտօնը, հրատարակելով ուճկից»:

Յունարի 6-ի արեւոյց վնասվածների օգտին հետեւեալ անձինք ուղարկել են մեզ հետեւեալ գումարները. Ռուզն-Աղայից, տիկին Մարգարիտ Հախումեանցի միջնորդութեամբ՝ Կոր. Տէր-Յովհաննէսեանց, Նիկ. Տէր-Յովհաննէսեանց, տիկին Մ. Տէր-Յովհաննէսեանց, Մ. Հախումեանց, Ս. Հախումեանց, Ա. Մէլքե-Շահապարեան, Կ. Երուսակեան, Գ. Յովհաննէսեան, Մ. Մարգարեան, տիկին Վ. Մարգարեան, տիկին Կ. Բաւարեան, Ն. Նազարեան, Ն. Բարսեղեան, Այգայտ, Ա. Յովհաննէսեան, Գ. Գրիգորեան, Հ. Վիրաբեան, Մ. Գոչարեան, Ա. Եսրամիշեան, Պ. Բարդաւարեան, Գ. Յովհաննէսեան, Ն. Արարեան, Մ. Մինասեան, Ա. Գրիգորեան, Գոնարեան, Արաշանեան, Լ. Վարձեկեան, Կ. Աւագեան, Ա. Ղարաբեգեան և տիկին Մ. Հախումեանց, միասին 72 ռուբլի. Բագուից՝ Կոր. Միրզոբեկեան և ընկ. նախկին գործարանի ծառայողները 30 ռուբլի. Լազարից՝ Մ. Օթարեան, Պ. Պետրոսեան, Նարինեան, Ա. Վաչեան, Յ. Տօրիկի, քնապետ Ֆօնդէնօնէ, տպագր. վարչիկ Ս. Մատինեան, Ն. Տէր-Ղուկասեան, Մ. Մէլքե-Յովհաննէսեան, Մ. Մարեան, Գ. Արուստի, ոմն, Յ. Օթարեան, ոմն, բոլոր միասին 31 ռուբլի. Մօսկվայից՝ հայ երիտասարդ վաճառականներ Ա. Քրիկեան, Մանուկեան, Պօղոսեան, Աւետիսեան, Բունյաթեան, Ալմանէսեան, Սիմօնեան, Բեդլարեան, Պօղոսեան, Այգայտ, Կրեկեան, Տէր-Մինասեան, Կ. Հալապեան, Թումանեան, Տէր-Պետրոսեան, Ա. Գեորգեան, Տէր-Չաքարեան, Չաքարեան, Թաղանթեան, Այգայտ, բոլոր միասին 60 ռ. 60 կ. Թիֆլիսից՝ քաղաքի երկաթուղային կայարանի արհեստանոցի վարպետներ՝ Պիտրեան, Բլոնօբըրց, Մարտիրոս, Բախաճե, Մաթիսեան, Մալի, Ղալիպեան, Դոմոբրօւսկի, Ճախաօւ, Օղանց, Բալուք, Չիրազեան, Շիֆի, Տիտեան, Սերոբեան, Բիկեան, Ճիւնի, Սահակեան, Փրիքօւ, Եսրամիշեան, Աւագեան, Տանդր, Սանդր և Նիկօլայ, բոլոր միասին 20 ռուբլի, ընդամենը 213 ռ. 60 կօպ. իսկ նախկին 511 ռ. 88 կ. գումարի հետ ունենք 725 ռուբլի 48 կօպէկ:

Հարկաւոր ենք համարում տպագրել հետեւեալ երկտողը, որ ըղիւն է գրողի «անկեղծ արեւոյց»՝ «Ներքեց եր կաթողիկոսի ընտրելու նկատմամբ մի քանի խօսք գրեմ: Ինձ այնպէս է թլում թէ ոչ մի իսկական հայի համար բնաւ հարց չէ կարող լինել այն մասին, թէ ով պէտք է նստի Գրիգոր Լուսաւորչի թափուր աթոռի վրա: Հարկաւոր այն անձը, որը երկար տարիների փորձով և տոկոսութեամբ ամեն վայրկեան ցոյց է տուել, որ իր սիրտը բաբախում է հայի համար խորհանքի այսօրայն Երուսաղէմ ակառնայ նստելու ճարտար չէ խօսում թէ ով է արժանի կաթողիկոսը: Ինչու համար է նա Երուսաղէմ դնացել: Ուստի կամ թէ ուխտաւորներից պահանջուր ժողովուրդ: Կա և դրա նման դիտաւորութիւններ ունեցող հոգեւորականները մայրաքաղաքներ են գնում նստում կամ այլ և այլ զօջաքաղութեամբ զբաղվում: Իսկ նա ով սիրում է ազգը, հայրենիքը, եկեղեցին, և հանդատութիւն, փառք և կեանք գոհում է իր աչքին ու եկեղեցուն, ահա նա թափառում է հրէաների մայրաքաղաքում: Եթէ ազգը այս անգամ չը ճանաչի իր բարեկամին, իր նաւաստանը՝ հովիւն և իր քաջ ու արթուն կաթողիկոսացուն, թող էլ այսուհետ երբեք չը գանգատէ թէ հոգեւորականները այսպէս են, տէրայնները այնպէս են և այլն: Հայ ազգը պէտք է այսօր աղնուութեամբ ցոյց տար թէ ինքը գիտէ պատել, մեծարել իր պանդուխտ, հայրենիքից հեռու հասած հայրապետացուն: Եթէ խորհանքը ձեռքով աստուածայն պատճառով միայն հիշք տրին, միայն հիշք օր նստի աթոռի վրա, դա էլ մեծ նշանակութիւն ունի. այսուհետ ամենքը կիմանան, որ ազգը ոչ թէ անպար մարդկանց, այլ Խրիմեաններ է ընտրում»:

ԱԼԷԲԱՆԴՐՈՊՈԼԻՅ մեզ գրում են. «Չեր լրագրի № 17-ում տպված էր մի լուր, իբր թէ «Ալեքսանդրօպօլում է ժամանակին գրադարան բանալու իրաւունքն արդէն ստացված է»: Խորհանքաւոր խնդրում է յայտնել ընկերոյց հասարակութեան զեւտութեանը, որ է ժամանակին գրադարանի բանալու իրաւունքը Ալեքսանդրօպօլում դեռ ևս ստացված չէ պ. նախագահներից»:

ԵՒՊԱՏՈՐԻԱՅԻՅ մեզ գրում են. «Ամիս 23-ին, տեղիս հայոց եկեղեցում, կայացաւ կաթողիկոսի ընտրութեան համար գաւառական պատգամաւորի ընտրութիւնը: Ժողովը միաձայն ընտրեց պ. Յակոբ արքա Սեֆերեանին, իսկ նրա բացակայ լինելու պատճառով՝ կաթողիկոս ընտրեց, փաստաբան Ղ. Մուրադեանին»:

ԻԳՐԻԻՅ մեզ գրում են. «Սուրմալու մի քանի գիւղերից տիրացուների մի ամբողջ լեզին, թողնելով արօրն ու գութանը, եղն ու գոմէջը, վեր-



